# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 02321370

Ջրօգտագործողների ընկերության կողմից ջրօգտագործողին ոռոգման ջրի մատակարարման

քաղաք Երևան «09» 07 201[illegible]թ.

ՀՀ ոստիկանության զորքերը, ի դեմս ոստիկանության զորքերի հրամանատար, ոստիկանության պետի տեղակալ գեներալ-լեյտենանտ Լ. Երանոսյանի, որը գործում է ոստիկանության զորքերի կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Երևան>> Ջրօգտագործողների ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն՝ Մ.Յա.Ասատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական և ջրային օրենսգրքով, <<Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին>> օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրի պայմաններով ոռոգման ժամանակաշրջանում Ընկերությունը Ջրօգտագործողին մատակարարում է ոռոգման ջուր, իսկ Ջրօգտագործողն ընդունում է այն և վճարում:

1.2 Պահանջվող և մատակարարվող ոռոգման ջրի քանակը սահմանվում է Հավելված1-ով, որը կազմվում է Ըստ Ջրօգտագործողի Ջրօգտագործման պլան-ժամանակացույցի հիման վրա և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, որը կնքվում է մինչև ոռոգման ժամանակաշրջանի սկիզբը: Այն կարող է փոփոխվել կողմերի փոխհամաձայնությամբ:

2. ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Ոռոգման ջրի մատակարարումը կատարվում է համաձայն Հավելված 1-ի, որն իրականացվում է Ջրօգտագործողին ոռոգման ջուր մատակարարող ջրատարի գլխամասում:

2.2 Կողմերի փոխհամաձայնությամբ տվյալ հերթական ոռոգման ժամկետը կարող է տեղափոխվել մեկ այլ ժամկետ, որի դեպքում նախորդ չօգտագործված ջրի քանակը չի լրացվում:

3. ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

3.1 Ոռոգման ջուրը Ջրօգտագործողին մատակարարված է համարվում, Ջրօգտագործողի կողմից ոռոգման ջրի բաշխման մատյանում կամ ԱԿՏ-Օրագրում նրա ստորագրությամբ հաստատելով, որը հիմք է հանդիսանում ստացած ոռոգման ջրի դիմաց վճարման և փոխադարձ հաշվարկների համար:

4. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ԴԻՄԱՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐԸ

4.1 Մատակարարվող ոռոգման ջուրը չափվում և հաշվառվում է խորանարդ մետրով, որի մեկ միավորի դիմաց գումարը սահմանում է Ընկերության ընդհանուր (ներկայացուցիչների) ժողովը:

4.2 Ջրօգտագործողը վճարում է փաստացի ստացած ոռոգման ջրի դիմաց:

4.3 Տվյալ ամսվա ընթացքում ստացած ոռոգման ջրի դիմաց Ջրօգտագործողը վճարում է մինչև հաջորդ ամսվա 15-ը անկանխիկ եղանակով, բանկային կամ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Ընկերությունն իրավունք ունի՝

5.1.1 Պայմանագրով նախատեսված ժամկետներում մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարում չկատարելու դեպքում՝ Ջրօգտագործողի նկատմամբ կիրառել օրենքով և Պայմանագրով նախատեսված միջոցները:

5.1.2 Ջրօգտագործողի կողմից համաձայնեցված ջրօգտագործման հերթի խախտումով կամ ինքնագլուխ (ջրագողության) ճանապարհով ոռոգման ջրի օգտագործման դեպքում՝ Ջրօգտագործողի մասնակցությամբ, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ առանց նրա մասնակցության, կազմել համապատասխան ակտ՝ նրան վարչական պատասխանատվության ենթարկելու համար կամ հանձնել Ընկերության Վեճեր լուծող հանձնաժողովի քննարկմանը:

5.1.3 Հերթական ոռոգման ջուրն Ընկերությունն իրավունք ունի չմատակարարելու, եթե Ջրօգտագործողի կողմից ամբողջովին չի վճարվել նախորդ ամսվա մատակարարված ոռոգման ջրի դիմաց: Նախորդ ամսվա պարտքը մարելուց հետո 4(չորս) օրվա ժամկետում ոռոգման ջրամատակարարումը վերսկսվում է:

5.1.4 Հայտով չնախատեսված կամ պակաս հայտավորված ոռոգման ջուրը չի մատակարարվում, այն կարգավորվում է սույն պայմանագրի կետ 5.2.3-ում և 1.2-ում սահմանված կարգով:

5.1.5 Պահանջել ջրօգտագործողից հատուցել Ընկերությանն պատճառած վնասները, չստացված եկամուտները և այն ծախսերը, որոնք Ընկերությունը կատարել է իր խախտված իրավունքները և գույքային կորուստները վերականգնելու համար:

5.1.6 Դատական կարգով Ջրօգտագործողից բռնագանձել չվճարված ոռոգման ջրի պարտքի գումարը և սույն պայմանագրի կետ 4.3-ում սահմանված վճարման ժամկետի խախտման համար տույժ՝ պարտքի գումարի օրեկան 0.15%-ի չափով, հաշվարկելով ոչ ավելի, քան 180 օր:

5.2. Ջրօգտագործողն իրավունք ունի՝

5.2.1 Ստանալ Հավելված 1-ով նախատեսված ոռոգման ջրի ամբողջ ծավալը:

5.2.2 Պահանջել ջրաչափություն իր հողակտորին ոռոգման ջուր մատակարարող ջրատարի գլխամասում՝ որի մասին նախօրոք (ջրումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ) գրավոր դիմել Ընկերությանը:

5.2.3 Մինչև տվյալ տարվա հունիսի 15-ը գրավոր դիմել Ընկերությանը՝ Ջրօգտագործման պլան-ժամանակացույցի փոփոխության վերաբերյալ:

5.2.4 ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով պահանջել Ընկերության կողմից պայմանագրի կետանցման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում:

5.2.5 Ոռոգման ժամանակաշրջանում ծագած տարաձայնությունների և վիճելի հարցերով դիմել Ընկերության Վեճեր լուծող հանձնաժողովին:

5.3.1 Ջրօգտագործողին ոռոգման ջուրը մատակարարել Հավելված 1-ով նախատեսված քանակով, իսկ մատակարարված ջրի ծավալը համալրել տասնօրյա ժամկետում:

5.3.2 Հատուցել իր մեղքով Ջրօգտագործողին պատճառած նյութական վնասը:

5.3.3 Ջրօգտագործողի դիմումը 10(տաս) օրվա ընթացքում քննարկել Ընկերության Վեճեր լուծող հանձնաժողովում և նույն ժամկետում այդ մասին տեղեկացնել Ջրօգտագործող-դիմումատուին:

5.4. Ջրօգտագործողը պարտավորվում է՝

5.4.1 Իր միջոցներով սպասարկել անմիջականորեն իր հողակտորին ոռոգման ջուր մատակարարող ջրատարի հատվածը (իրեն նախորդող մշակվող հողատարածքից մինչև տվյալ հողատարածքը):

5.4.2 Ընկերության հետ համաձեյանացված ժամկետում իր հողակտորին ոռոգման ջուր մատակարարող ջրատարի գլխամասում ստանալ ոռոգման ջուր:

5.4.3 Յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարը կատարել մինչև հաջորդող ամսվա 15-ը բանկային կամ փոստային ծառայության միջոցով :

5.4.4 Հողատարածքը չմշակելու և (կամ) չոռոգելու դեպքում Ջրօգտագործողը պարտավոր է յուրաքանչյուր տարի մինչև մայիսի 15-ը դիմում ներկայացնել Ընկերություն պայմանագրի գործողությունը դադարեցնելու կամ ժամանակավոր կասեցնելու համար:

5.4.5 Մինչև ոռոգվող հողատարածքի օտարումը կամ իրավահաջորդության պետական գրանցումը, մարել Ընկերության պարտքը, որից հետո ձեռք բերողին կամ իրավահաջորդին փոխանցել սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները, այդ մասին 10(տաս) օրվա ընթացքում տեղեկացնել Ընկերությանը:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են փոխհամաձայնությամբ, անարդյունավետության դեպքում՝ Ընկերության Վեճեր լուծող հանձնաժողովի միջոցով, իսկ անհամաձայնության դեպքում լուծվում են դատական կարգով:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից, ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է 1(մեկ) տարի ժամկետով: Պայմանագրի գործողության ժամկետը համարվում է երկարացված նույն ժամկետով և պայմաններով, եթե պայմանագրի գործողության ժամկետի ավարտից երեք ամիս առաջ Կողմերից որևէ մեկը մյուսին չի դիմել այն լուծելու համար:

7.2 Պայմանագիրը վաղաժամկետ կարող է փոփոխվել, լրացվել կամ լուծվել Կողմերի համաձայնությամբ կամ առանձին, Կողմի նախաձեռնությամբ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պարտավորություններից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակները հաստատվում է ՀՀ օրենքներով և ենթաօրենսդրական իրավական ակտերով, որոնցում և սահմանվում է Ֆորս-մաժորային իրավիճակների հետևանքները՝ Կողմերի վրա տարածվելու կարգը և պայմանները, որոնք պարտադիր են Կողմերի համար:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ոստիկանության զորքեր | <<Երևան>> ՋՕԸ |
| ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ.հ.62/26 | ք.Երևան, Գ. Նժդեհի 46 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<Արդշինինվեստ բանկ>>ՓԲԸ, Մալաթիա մ/ճ |
| Հ/Հ 900013164026 | Հ/Հ 2474233158420010 |
| ՀՎՀՀ 01508098 | ՀՎՀՀ 02235077 |
| հեռ. 011-37-03-19 | Հեռ.010-48-00-88 |
| Էլ. փոստ: POLICEVP-GNUMNER@rambler.ru | |
| ______________ Լ. Երանոսյան | ______________ Մ. Յա. Ասատրյան |
| /ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատար, ոստիկանության պետի տեղակալ/ (ստորագրություն) | /Գործադիր տնօրեն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

«_ _» _____2017թ. N02321370 պայմանագիր

Մատակարար՝ **«Երևան»ՋՕԸ**, ի դեմս գործադիր տնօրեն Մ.Ասատրյանի և ջրօգտագործող՝ ՀՀ ոստիկանության զորքերը, ի դեմս ոստիկանության զորքերի հրամանատար, ոստիկանության պետի տեղակալ գեներալ-լեյտենանտ Լ. Երանոսյանի

ըստ ստորև նշված պահանջվող ոռոգման ջրի կազմեցին ջրօգտագործման հետևյալ պլան-ժամանակացույցը

**Ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի հողատարածքները և պահանջվող ոռոգման ջրի քանակը*.**

| Համայնքի անվանումը, բաժանարարի համարը (անվանումը) | Ընդամենը | | այդ թվում | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ոռոգվող հողատա-ռաքը | Պլանային ջուրը | Հացահատիկ | | Բանջար-Բոստան | | Անտառ | | Պտղատու այգի | | Խաղողի այգի | | Բազմամյա խոտ | | Նորատունկ այգի | | Անտառ | | Տնամերձ | |
| | հա | հազ.խմ | հա | հազ.խմ | հա | հազ.խմ | հա | հազ.խմ | հա | հազ.խմ | հա | հազ.խմ | հա | հազ.խմ | հա | հազ.խմ | հա | հազ.խմ | հա | հազ.խմ |
| Քանաքեռի ջր | 2,00 | 45,00 | | | | | | | | | | | 2,00 | 45,00 | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **Ընդամենը** | 2,00 | 45,00 | | | | | | | | | | | 2,00 | 45,00 | | | | | | |

*Ներառյալ Ընկերության ոռոգման համակարգի կորուստները:

**Ջրօգտագործման պլան-ժամանակացույց**

| Համայնքի անվանումը, բաժանարարի համարը (անվանումը) | Չափման միավորը | Պլանային ջուրը | այդ թվում ըստ տասնօրյակների | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մարտ | | | Ապրիլ | | | Մայիս | | | Հունիս | | | Հուլիս | | | Օգոստոս | | |
| | | հազ.խմ | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III |
| | լ/վրկ | 45,00 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 3 | 3 | 2 | 3 | 3 | 3 | 3 | 5 | 5 | 5 | 5 | 2 |
| | հազ.խ.մ. | | 0 | 0 | 0 | 0 | 0,0 | 0,0 | 2,25 | 2,25 | 2,25 | 2,25 | 2,25 | 2,25 | 2,25 | 4,50 | 4,50 | 4,50 | 4,50 | 2,25 |
| | աճող. | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 2,25 | 4,50 | 6,75 | 9,00 | 11,25 | 13,50 | 15,75 | 20,25 | 24,75 | 29,25 | 33,75 | 36,0 |
| | լ/վրկ | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | հազ.խ.մ. | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | աճող. | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **Ընդամենը** | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| այդ թվում ըստ տասնօրյակների | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սեպտեմբեր | | | Հոկտեմբեր | | | Նոյեմբեր | | | Դեկտեմբեր | | | |
| I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | |
| 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | |
| 2,25 | 2,25 | 2,25 | 2,25 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | 45,00 |
| 38,25 | 40,50 | 42,75 | 45,00 | 45,00 | 45,00 | 45,00 | 45,00 | 45,00 | 45,00 | 45,00 | 45,00 | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |

*Ներառյալ Ընկերության ոռոգման համակարգերի կորուստները:

Պայմանագրային գումարը՝ 45000 x11= 495,00 հազ.դր

Անդամավճարը՝ 2,0 x 2000 = 4,0հազ. դրամ

**ԸՆԴԱՄԵՆԸ՝ 499,0հազ. դրամ**

«Երևան»ՋՕԸ

.....Մ.Ասատրյան

M.P. (ստորագրություն)

«....» 2017թ.

ՀՀ ոստիկանության զորքեր

.....Լ.Երանոսյան

M.S. (ստորագրություն)

«....» 2017թ.